

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՌԻՄԵԿԱՅ ԵՒ ՆՈՐԱ ՏՈՆՄԸ

Ե.

Ումեկի հետ կարինից գաղթել էին, լսու վարդանի եւ ըստ Գանձակեցու, եւ նորա ազգականները, ինչպէս տեսանք նախընթաց պրակում. Գանձակեցու մէջ այս տեղեկութիւնը շփոթ է բնազրի խանգարուած լինելու պատճառով. «Հանգերձ որդութիւն Յովհաննաւ եւ Ստեփանոսիւ եւ եղբարրք իւրով» պէտք է ուղել «Հանգերձ որդութիւն Յովհաննու՝ Ստեփանոսիւ եւ եղբարրք իւրով», որ համապատասխան կը լինի միանգամայն Վարդանին (\*): Ապաթէ ոչ Գանձակեցու խանգարուած խօսքերն այնպէս կարելի է հասկանալ, որ Ստեփանոս և Յովհաննէս Ումեկի որդիքն են, որոնց հետ եկել են և իւր հինգ եղբայրները, որ ոչ մի ազրիւրից չի հաստատում: Երզնկացուց տեսանք, որ Քարիմութինն է կոթուղիկէ եկեղեցու տէրը հօրմանուանից յետոյ, միջեռ Յովհաննէս և Ստեփանոս անունով աւելի աւագ եղբայրներ ունենալու գէպքում, անկարելի կը լինէր նորա ժառանգութիւնը տոհմի կեղբոնական, զուցէ և գերեզմանատան, եկեղեցուն: Եւ յիրաւի մենք ունինք հաստատուն ապացոյցներ Յովհաննէսի, նորա Ստեփանոս որդու և միւս եղբայրների մասին:

Լալուարի հիւսիսային ստորոտում միշարք պատմական վայրեր կան շատ կարեռ հասկիտական մնացորդներով և արձանագրութիւններով, որ դեռ ևս բանսիրութեան անյայտ են մնացած, դոցանից մէկն է Խոռովակերտը, որ գտնեում է ներկայ Զանախչի հայ զիւղի մօա, որի մասին Զալյալեան միայն հակիրճ յիշատակութիւն ունի (\*\*): Այդ տեղ անտառի մէջ զեռ ևս կանգուն է Խոռովակերտի գմբեթաւոր տաճարը իւր ուրոյն կառուցուածքով, գուշթի եւ շըջակայքի խաչքարերի հետ՝ բա-

(\*) Վերջին պահուն ծեռազիրների համեմատութիւնն էլ հաստատեց մեր զիտաղութիւնը. Ղուկի, հրատ. մէջ տպագրական սխալ պէտք է համարել մէջրերուած ձեւով, ինչպէս եւ Յովհաննիսանի հըրատարակութեամբ՝ Մոսկուայում:

(\*\*) Ա. 88:

ւականաչափ տմբաղջական եւ կիսեղծ արձանագրութիւններով, տաճարի արևմտեան զրան զլիսին, կիսաւեր զաւթի կողմից հետեւալ մէծ արձանագրութիւնը կայ (\*).

1. Ի թիվու Զ (ԶԱ.) ի հայրապետորիան Տն. Կուսանեայ (?) արհիկալիսկոպուրիան Հայապատակայ աշխարհակազութեն և զաւրապետութեն Սարունին ի բազառուութեն Պատրի ևս

2. Ստեփանոս որդի Յոհանան զնեցի զնուակերս եւ զիր զեղեան զ

3. այզին որի Շղեն վանի

4. ցւ յաւիտեան ի կո սպիտակ սուշա

5. մի եւ շինեցի զայ ի հիմնակ սկսելլ

6. ուսով անմանին այ շինել ինձ եւ եղրա

7. ր ինց եւ որոց արձան կնեղանի տղի

8. զերկմանի մինչեւ զայ իւ առն ողորմուրի

9. ինձ եւ ինցն ի փառ սիւր արդ որ խախտել շանան զի

10. մ տրու (?) յեղեցոյն եւ կամ զեղի լիս համել յազգի ի

11. մեկ խախտեցին եւ անկցին հաւատոց եւ բանեակութենի (\*\*) :

Ահա Վարդանի խօսքերի ճշգութեան անհերքելի ապացոյցը. Ումեկի հետ եկողը Յովհաննեսի որդի Ստեփանոսն է եղբայրներով, որ նորա ազգականներն էին: Ինչպէս Ումեկն էր վանք ու կալուածներ զնել իւր և որդուց համար, նոյն օրինակին է համեռում և ազգականը՝ պարոն Յովհաննեսի որդին Ստեփանոսը, զնելով եռուակերտը իւր զիւղերով, շինելով վանքը հիմքից, որպէս «արձան կենգանիք» և «տեղի զերեզմանիք» իւր և եղբայրների համար: Միջնադարեան հայ իշխանական տոհմերի համար անհրաժեշտութիւն էր իրենց հոգեռ կեղրոնն ու տոհմական զերեզմանատուն ունենալ իրեւ վանք. աւելի երկրորդական տոհմերն ու ազատները խըմբեւում էին իրենց կամ մի այլ իշխանի վանքի շուրջը. այսպէս մի. գարում Սանահինը ոչ միայն Զաքարեանց, այլ Շո-

(\*) Հրատարակում է տառաջին անգամ: Ընդգծուած տառերը կցուած են իրար:

(\*\*) Առաջին երկու երկար տողերը զրուած են դրան զլիսին, իսկ մնացածը կամարակալ քարի վերայ: Ընդգծուածները կցուած են:

թռոկանց և Դուղի Մամիկոնեանց մի ճիշ-  
զի գերեզմանատունն էր, որ հաստատում  
է այնտեղ եղած արձանազրութիւններով:

Ուշադրութեան արժանի է, որ Ստե-  
փանոսը Խոռակերտի և գլուղերի համար  
վճարում է ակո. սպիտակ սուլտանի», որ  
ցոյց է տալիս, թէ նո էլ Ումեկի նման  
իւր հարսաւթիւնը բերել էր Փ.-Անիա-  
կան սելջուկիան պետութեան սահմաննե-  
րից, որոնց մէջն էին Մանազկերտն ու  
Կարինք: Հաւանօրէն Ստեփանոսն էլ վա-  
ճառական էր, ինչպէս Ումեկը. Վարդանի,  
մանւանդ Գանձակեցու խօսքերը վերա-  
բերում են վաճառականական մի ամբողջ  
խմբի, որոնց թուին են պատկանում Ու-  
մեկից և ազգականներից զատ՝ նաև Սա-  
րաւանի որդիքը՝ «Շնորհաւերն և Մկրտիչն  
ընչաւէտք և մեծատունք»:

Արձանազրութիւնից պարզուում է նաև,  
որ Խոռակերտը իւր շրջակայքով, ասել է  
Սաղախլուի գետի վերին հոսանքը, մըտ-  
նում էր Մահկանաբերդի իշխանութեան  
և Հաղբատի առաջնորդութեան սահման-  
ների մէջ, մինչդեռ Խոժոռնին իւր շրջա-  
պատով, այսինքն նոյն գետի միջին հո-  
սանքը Զաքարեանների սեպհականութիւն-  
էր ըստ Վարդանի և ըստ բանասիրութեան  
դեռ ևս անյայտ արձանազրութիւնների,  
որ մի այլ առթիւ պիտի հրատարակենք:

### Պատմութեան մասին

Ամենայն հաւանականութեամբ Ումեկի  
և իւրայինների տեղափոխութեան հետ էր  
կոպուած և մի ուրիշ տոհմի տեղափո-  
խութիւնը. նոքա պէտք է որ ծաղմամբ  
Հայաստանի արքմանեան սահմաններից կամ  
Սեբաստիայից լինէին, գուցէ և Մանազ-  
կերտից՝ Սեբաստիայի հետ վաճառակա-  
նութեամբ կապուած: Էջմիածնի N. 364/987  
ընտիր զբութեամբ Հայրապետ քահանայի  
ձեռքով նկարազարդուած մագաղաթի ձե-  
ռապերը զրուած է 1211 թուին Սեբաս-  
տիայում «ընդ հովանեաւ որ ածածնին և  
որ Սարգսի զաւրավարին, որ յանուն նո-  
ցա կանգնեցաւ որ եկեղեցիս ի քաղաքիս  
Սեբաստիա»: Նիւթի զրամը հոգացել են  
«Յեւանէս պարոն, Ուքան և Պապքան»:

(\*) Մեր Գրչութեան արուեստը, Գ. Քարտէզ  
հայ հնագրութեան. § 72:

ԺԳ. գարու երրորդ քառորդին երեան են  
զալիս որևէ ելեան Հայաստանում Ուքան  
և Պապքան անունով երկու եղբայրներ ի-  
րենց հարսի հետ մի քանի արձանագրու-  
թիւնների մէջ, որոնցից մէկը Խոռակեր-  
տում, բայց որ զլսուորն է, նոյնպէս  
վանքի և կողուածի գնումներով, ինչպէս  
Ումեկիաններն ու նրանց ազգականները:

Սրտոց և յիշատակարանի եղբայրների  
նոյնացման մի դժուարութիւն ունինք  
միայն, ժամանակի երկար տևողութիւնը  
երկու յիշատակութիւնների մէջ. բայց ե-  
թէ ընդունինք, որ Սեբաստիայում յիշ-  
ուած եղբայրները փոքրահասակ էին, այդ  
դժուարութիւնն էլ կը վերանայ: Արձանա-  
զրութիւնների մէջ Ուքան և Պապքան եղ-  
բայրների վերջին յիշատակութիւններն ու-  
նինք 1271 և 1274 թուականներին, որ  
անկարելի չէ 1211 թուին ապլոզ պատա-  
նիների համար. ընդհակառակ զարմանալի  
գուզաղիպութիւն կը մնէր երկու զոյգ տար-  
բեր եղբայրների այս նոյնանուն կը կնու-  
թիւնը, այն էլ միմեանցից շատ հեռու  
շրջաններում: Նոյնացման զէպքում եղ-  
բայրների հետ արձանազրութիւնների մէջ  
յիշուած Դապտայ խաթունը պէտք է հան-  
գուցեալ կրտսեր եղբօր՝ Մերչայի կինը լի-  
նի, իսկ յիշատակարանի Յեւանէս պարոնը  
նրանց տւագ եղբայրը կամ ազգականը:

Արձանազրութիւններից ամենահինը  
եղբայրների անուան յիշատակութեամբ  
Արցախի Մեծարանց Ս. Ցակորի վանքումն  
է. Ուքան և Պապքան եղբայրները՝ «որպ-  
էի(ք) Սարգսի հոգո որդոյն» միաբանում  
են Զալալ Դաւլայի իշխանութեամբ ԶԱ. =  
1252 թուականին, նուէրներ տալիս զան-  
քրոր յիշատակին(\*):

Երկրորդ հնագոյն արձանազրութիւնը  
նոյն եղբայրների անունով Խոռակերտումն  
է՝ 1268 թուականից(\*\*):

### Զգել

1. կամաւ ան
2. մահին այ մել Ու
3. ան եւ Պապքան որդ
4. ի՛ Սարգսի բռն Հո
5. զոյն միաբանեցա

(\*) X. B. 1917, 154. Orbeli. Armianskia Nadpis.

(\*\*) Հրատարակուում է առաջին անգամ. ընդ-  
գուած տառերը կցուած:

6. սր ոխտիս հրամանաւ
7. աշխարհարյու վիապետին Վղանա
8. եւ տր եւ միաբանիս ե
9. տուն մեզ զՀո
10. զոյն զալլուսկա
11. և առաջ յամին եկ
12. եղեցին ժամ էդ Ամեն Տ
13. իննա եւ յետ մեր ման
14. ուսան մեզ առնեն անխափան(\*):

Երկու եղբայրների ամենից կարեոր արձանագրութիւնը հետեւեալն է, որ գլուխում է Կորմիք վանքում Սնիի մօտ, Ախուրեանի ափին.

1-2. ի բուխ/Չի.

3. Շնորհին այ ևս Ուժան Քարիմադինս և եղբայր

4. իմ Պապան Վախրադինս որդի Սարգսի քոռն Հոգ

5. ոյն (և) հարսն իմ Դապտայ խարունս զնեցա զվանիս

6. իւր առնեայն սահմանաւ հողով և չըրով և շինեցա ի կորդոյ և զարդարեցա

7. սպասի և գրնեաւ և ընծայեցա և կեղեցոյ զմեր զամազին հայրենին զիս

8. նասի(ար)ին դանեն որ միշաւրեն իր Շահնապին զիւրեն և զիսրաւ իրոյ

9. ման կուրպականուն և այցի մի ի Բագրան զԱյզիհարն և զԱբսին կապն և

10. զնայիլոյ դ դանեն և զադացու Հայր Սարգսի և այլ եղբարդ փոխարեն հատու

11. ցին յամենայն շարարն առ զ իւրան մեր հաւրեն Սարգսի և Սերյոյ պատա

12. րազեն և զ աւր Սարգսի արշաւունին: որ հակառակ (կ)ան ընծայից դատին ի իրի

13. ստու ամեն(\*\*). Միսիրար գրիչ

Նոյն եղբայրներն ունին մի չորրորդ աղաւաղ արձանագրութիւն Հոռոմոսու վանքում, որից երեսում է, թէ կալուածական գնումներ են կատարել և ուրիշ նուէրների հետ ընծայել վանքին 1274 թուրն(\*\*\*):

Մի վերջին արձանագրութիւն էլ նրանք Անիում ունին, բայց առանց թուականի և պակասաւոր, երեան եկած ակազիմիկ Մասի պեղումներով. արձանագրութիւնից պարզում է, որ Ուքան և Պապքան եղ-

(\*) Վարդան վարդապետի անուան յիշատակութեամբ կրկին ապացոյցն ունինք Հազրատի եւ Խոռակարտի հոգեւոր կապերի:

(\*\*) X. B. 1917. եր. 152: Փակազի մէջ առնուած մասերը ուսուցչապետ Օքքէլին է լրացնում: Տես եւ Ալիշան, Շիրակ, 170. մխալաշատ: «Արքաւու» խօսքի նշանակութեան մասին ա. N. Mart. Arkaun mongolskoe naswanie christian. SP. 1905:

(\*\*\*) Ալիշան, Շիրակ. 173:

բայրները շինել են «զանկակատունս» եւ նուէրներ տուել, ստանալով պատարագներ ամեր հաւրն Սարգսի և Սթէ Սարգսի արքաունին եւ Մերչէ և. [պակաս պատարագի թիւը] աւը) մեզ Ուքանիս և Պապքանիս և Դապտայ խաթունիս...»(\*):

Վերջին արձանագրութիւնները կը ուղարկող են լինել եղբայրներու, որ Ուքան և Պապքան եղբայրները իրեւ վաճառականներ հաստատում են Անիում և Աւմիկանների ու նրանց ազգականների նման առնմատկան եկեղեցի ձեռք բերում:

\* \* \*

Համեմատութեան նիւթ կարող է կազմել զրամի մօտաւոր արժէքը հասկանալու համար նուև հետեւեալ արձանագրութիւնը, որի բնագիրը վերականգնել և բացատրել է պրոփ. Մասը(\*\*):

1. Թվ. Չժ ի տիկերակարորի Հուղարտ դամին և Սահմադին որդի [Անտեաց զ] նեցի զրագաւորածիս [ս] տեղի[ս] զՄրեն ի յՄրացրէ որդոյ Շահնշահի հաղալ ընէ[ից ին]ոց ի վայելումն իմն և որդ

2. ոց իւնց. ած շնորհաւոր արվայաց յահիսկան ժամանակաց: | ի բվ | Չի յաշխարհակաղորք Ապաղա դամին և Սահմին, որ պարունին ամարանց ու դարպաս յկայր, զամ այցին և գրաւ

3. իսու, որ կոյի Արքայուրի, զնեցի զալին մեկ յիւր տիրուշին: և յիմ մաս դուս առամց(?) վարդակայի ձեւեցի ու հիմն ձեզեցի դարապասի ու դրանիս[իս]իս: ի [Ժ] տարին կատարեցի: ած

4. շնահաւոր արացի պարունի Սահմանին որդից ի յորդիք. ու խարա, որ եղալ դարպասի: իս: ու: դուկաս դամեկան:

Ընթերցողը աեսնում է, որ արձանագրութիւնը երկու մասից է բաղկացած. առաջինը Մըրենի գնման է վերաբերում, իսկ երկրորդը Սահմադին «պարունօի համար պարապաս» այգի զնելուն. քառասուն հազար դուկատ դահեկանը ծախսուել է ապարանքի շինութեան, այզի ու զրախտ գնելու և կարգաւորելու համար: Հրատարակիչը «դուզատ դահեկանը» համազօր է կարծում կորմիր կամ ոսկի դահեկանին: Էջմիածին

Գ. ԱՐՔԵՊՈՒ. ՅՈՎՈՒՄԻՔԵԱՆ

(\*) X. B. 1917. 151:

(\*\*) N. Mart. Nowie materialy po armianskoj Epigraphike. 1893. ուսուերէն (Նովիէ մատերիալի պո արժեանակոյ էպիգրաֆիկէ):